



Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Ն

*Տասնվեցր ապրիլի,
երկու հազար տասնչորս թվական*

*քաղաք Երևան,
Հայաստանի Հանրապետություն*

Մի կողմից,

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետ՝ ՀՊՄՀ), ի դեմս ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, ով գործում է ՀՊՄՀ կանոնադրության հիման վրա,

և, մյուս կողմից

Արցախի պետական համալսարանը (այսուհետ՝ ԱրՊՀ), ի դեմս ռեկտոր Մանուշ Մինասյանի, ով գործում է ԱրՊՀ կանոնադրության հիման վրա,

ՀՊՄՀ-ն և ԱրՊՀ-ն միասին սույն Պայմանագրում այսուհետ անվանվում են Կողմեր,

հաշվի առնելով համագործակցելու փոխադարձ ցանկությունը կրթադաստիարակչական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ոլորտներում՝ համատեղ փոխշահավետ ծրագրերի մշակման և իրականացման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների ակադեմիական փոխանակման, համատեղ հայտարարությունների և փաստաթղթերի ստորագրման, տեղեկատվական, մարզամշակութային և այլ հարցերում,

հիմք ընդունելով 2014թ. մարտի 4-ին Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարների ստորագրած «ՀՀ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունների միջև կրթության և գիտության բնագավառում 2014-2020 թվականների համագործակցության ծրագրի» դրույթները,

նպատակ ունենալով ապահովելու իրենց հաստատություններում որակյալ կրթություն,

պատրաստակամություն հայտնելով հնարավորությունների սահմաններում ապահովելու փոխշահավետ համագործակցություն,

կնքեցին համագործակցության մասին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պայմանավորվում են համագործակցել գործունեության հետևյալ հիմնական ուղղություններով՝

- խորհրդատվական ծառայություններ՝ կրթական գործընթացների վերլուծության և դրանց աջակցության նպատակով,
- մասնակցություն սույն Պայմանագրից բխող՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերի քննարկումներին,
- մասնակցություն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կրթական ծրագրերում,
- համապատասխան մասնագետների մասնակցություն գիտաժողովների, սեմինարների, կոնֆերանսների աշխատանքներին, այդպիսի միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- Կողմերի կառուցվածքային ստորաբաժանումների համագործակցություն սույն Պայմանագրին վերաբերելի ոլորտներում,
- աջակցություն ուսանողական ինքնավար կառույցների՝ ուսանողական խորհուրդների, ուսանողական գիտական ընկերությունների համագործակցությանը՝ համատեղ ուսանողական գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների, մարզական սպարտակիադաների, փոխադարձության սկզբունքով ուսանողական ճամբարների և ամառային դպրոցների կազմակերպմանը, ճանաչողական փոխայցելություններին:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀՊՄՀ-ն իր հնարավորությունների սահմաններում՝

- 2.1.1. կաջակցի ԱրՊՀ ինտեգրմանը ՀՀ բարձրագույն կրթության համակարգ՝ ձգտելով ներգրավել ԱրՊՀ-ն նաև Բոլոնիայի կրթական գործընթացների շրջանակ,
- 2.1.2. կաջակցի ԱրՊՀ-ում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը (խորհրդատվություն համակարգչային ցանցերի ստեղծման, պահպանման, արդիականացման, անվտանգության ապահովման վերաբերյալ և այլն),
- 2.1.3. կաջակցի ԱրՊՀ-ում կրթության որակի բարելավման ուղղությամբ իրականացվող գործունեությանը, ներառյալ՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կառուցակարգերի կատարելագործմանը,
- 2.1.4. կմասնակցի մանկավարժական մասնագիտությունների գծով համատեղ փորձուսուցումների կազմակերպմանը ՀՀ, ԼՂՀ դպրոցներում և այլ հաստատություններում,
- 2.1.5. կնպաստի ԱրՊՀ-ում Կերպարվեստ և գծագրություն (050800), Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)(051100), Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն (051000), Հոգեբանություն (030300) և Կողմերի համար ընդունելի ցանկացած այլ մասնագիտությունների ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական և օժանդակ գրականության ցանկի վերամշակմանը և թարմացմանը, արդիականացմանը: